ՀԱՄԿԿ (Բ) ԲՈԼՈՐ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

ՀՐԱՀԱՆԳՉԱԿԱՆ

ՓԱԿ ՆԱՄԱԿ

ԿՈՎԿԱՍՅԱՆ ԿԱՐՄՐԱԴՐՈՇ ԲԱՆԱԿԻ
ԲԱՂԱՔԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԻՑ՝
ի ցրճաքննության
մասին կուսակցության լոզունգը կոչ կի-
րառելու հետ կապված հարցերի առթիվ

355.23
4-76

ԵՐԵՎԱՆ
1928

01 MAR 2010

ՀԱՄԿԿ (Բ) ԲՈԼՈՐ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

355.23
Կ-76
1003
13935

ՀՐԱՀԱՆԳԶԱԿԱՆ ՓԱԿ ՆԱՄԱԿ

ԿՈՎԿԱՍՅԱՆ ԿԱՐՄԻՐԱԳԻՐՈՇ ԲԱՆԱԿԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԱՐՔՈՒԹՅՈՒՆԻՑ՝ ԻՆՔՆԱՖԻՆԱՆՍԱՏՈՒԹՅԱՆ մասին կուսակցության լոզունգը կԿԲ կիրառելու հետ կապված հարցերի առթիվ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. Մ. ԱՍՆԻԿՅԱՆԻ
ԱՆՎԱՆ

ՄԱՐՏՈՒՆԱԿԱՆ
1928

41.260
12 3 MAY 2013
10677

Հայպոլիգրաֆի Ղար. տպարան, պատվեր № 549

գրառեպվար № 48 տիրաժ 500

ՀԱՄԿԿ (Բ) ԲՈԼՈՐ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

ՀՐԱՀԱՆԳԱԿԱՆ ՓԱԿ ՆԱՄԱԿ

ԿՈՎԿԱՍՅԱՆ ԿԱՐՄՐԱԴՐՈՇ ԲԱՆԱԿԻ ԲԱՂԱԲԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԻՑ ԻՆԲՆԱԲՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԼՈԶՈՒՆԳԸ ԿԿԲ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐՑԵՐԻ ԱՌԹԻՎ

Վերջին տարիներս մենք խոշորագույն հաջողություններ ենք ձեռք բերել Կարմիր բանակի մարտական կորովի անընդհատ աճման գործում։ Սակայն և՛ ուսուցման մեջ, տնտեսությունում ու հասարակական աշխատանքում և՛ Կարմիր բանակի շինարարության հետացած բոլոր բնագավառներում մենք, բոլոր հաջողությունների հետ միասին, ունենք մի շարք թերություններ։ Այդ թերությունների արմատներն ու բը-

նույթը վերջնական հաշվով նույնն են, ինչ պարզ ու վճռապես մերկացված են Համկկ (բ) կենտկոմի՝ կուսակցության բոլոր անդամներին ու բոլոր բանվորներին ուղղած դիմումով։

Այդ թերությունների (բյուրոկրատիզմի, կազմոնշչինայի, խեղաթյուրումների, անփութության) լիակատար վերացումը բանակի զարգացման այժմյան աստիճանում անհնար է՝ առանց նրանց դեմ մղած պայքարին ակտիվ մասնակից դարձնելու կուսկազմակերպություններին, առանց կուսկազմակերպության գաղափարական ազդեցության տակ այդ թերությունների դեմ մղած պայքարին ներգրավելու ամբողջ պետ կազմին և վերջինիս՝ ամբողջ կուսկազմակերպության, կոմյերիտմիության և կարմիր բանակայինների ամենալայն խավերի կողմից ամենաակտիվ ոգնություն ցույց տալու։

Կենտկոմն իր դիմումի մեջ հայտնում է, «Ռեկոնստրուկտիվ շրջանի խնդիրները չեն կարող լուծվել առանց սոցիալիստական շինարարության գործին մասսաների ամենահամարձակ, ամենավճռական ու ամենահետևողական ներգրավման»։ Նույն ձևով է գրված նաև Կարմիր բանակի մարտունակության հետագա բարձրացման հարցը։ Կարմիր բանակայիններն ու պետակազմը աշխուժ ձգտում են հայտնաբերում բարելավելու Կարմիր բանակի դրության բոլոր կողմերը, նրբազգացությամբ արձագանքելով ամեն տեսակ թերություններին, զանցառություններին։ Այդ առողջ ձգտումը դեպի շինարարության ակտիվ մասնակցությունն ու բանակի ամրացումը պետք է մեր կողմից գտնի ամենաուշադիր վերաբերմունք, պետք է ընդգրկվի մեր ղեկավարությամբ ու մեր ոգնությամբ։ Ուստի ինքնաքննադատության լոզունգը,—«որվա

կենարոնական լոզունգներից մեկը»— պետք է անմիջական արտահայտությունը գտնի նաև բանակում, առաջին հերթին և առավելապես կուսակցական կազմակերպությունում։

Ի՞նչ իրավունք ունենք մենք սպասելու և ի՞նչ բանի յենք ձգտում, բանակում ևս կիրառելով ինքնաքննադատության լոզունգը, յերբ պահպանվում են այն սահմանափակումները, վոր դրվում են բանակի հեղինակավոր կազմակերպության պայմաններով՝ իր զորական կարգապահության։

1. Հետագայում ուժեղացնել քաղաքատի ու կուսակցական կազմակերպության ակտիվությունն ու մասնակցությունը ռազմական շինարարության բոլոր հարցերում և առաջին հերթին անկուսակցական մասսայի գաղափարական աղդեցությամբ ամենալրիվ ընդգրկման միջոցով, վորպեսզի ավելի ու ավելի ամրակուռ դառնան կարմիր բանակի շարքերը, և բարձրանա նրա մարտական կորովը։

2. Բարձրացնել պետկազմի ազդեցությունը և ուժեղացնել նրա ուշադրությունը դեպի զորամասի կյանքի ու կենցաղի բոլոր հարցերը։

3. Բարոյական մերձեցում ու զոդում ստեղծել կարմիր բանակայիններին ու պետկազմի զանազան կատեգորիաների միջև։

4. Ավելի մեծ միասնություն ստեղծել հրամանատարական, քաղաքական, կուսակցական ու անկուսակցական կազմի աշխատանքում։

5. Դաստիարակել կարմիր բանակայինի, հրամանատարի, քաղաշխատողի մեջ այն գիտակցությունը, վոր նա կարմիր բանակի կառուցողն է վոչ միայն իր զորամասի (ջոկի, դասակի, վաշտի և այլն) սահմաններում, այլ և ավելի լայն խնդիր-

կենտրոնական լոզունգներից մեկը»— պետք է անմիջական արտահայտությունը գտնի նաև բանակում, առաջին հերթին և առավելապես կուսակցական կազմակերպությունում։

Ի՞նչ իրավունք ունենք մենք սպասելու և ի՞նչ բանի յենք ձգտում, բանակում ևս կիրառելով ինքնաքննադատության լոզունգը, յերբ պահպանվում են այն սահմանափակումները, վոր դրվում են բանակի հեղինակավոր կազմակերպության պայմաններով՝ իր զորական կարգապահության մասը։

1. Հետագայում ուժեղացնել քաղաքական ու կուսակցական կազմակերպության ակտիվությունն ու մասնակցությունը ռազմական շինարարության բոլոր հարցերում և առաջին հերթին անկուսակցական մասսայի գաղափարական ազդեցությամբ ամենալրիվ ընդգրկման միջոցով, վորպեսզի ավելի ու ավելի ամրակուռ դառնան կարմիր բանակի շարքերը, և բարձրանա նրա մարտական կորովը։

2. Բարձրացնել պետկազմի ազդեցությունը և ուժեղացնել նրա ուշադրությունը դեպի զորամասի կյանքի ու կենցաղի բոլոր հարցերը։

3. Բարոյական մերձեցում ու զոդում ստեղծել կարմիր բանակայինների ու պետկազմի զանազան կատեգորիաների միջև։

4. Ավելի մեծ միասնություն ստեղծել հրամանատարական, քաղաքական, կուսակցական ու անկուսակցական կազմի աշխատանքում։

5. Դաստիարակել կարմիր բանակայինի, հրամանատարի, քաղաշխատողի մեջ այն գիտակցությունը, վոր նա կարմիր բանակի կառուցողն է վոչ միայն իր զորամասի (ջոկի, դասակի, վաշտի և այլն) սահմաններում, այլ և ավելի լայն խնդիր-

ների և ընդհանուր մարտունակության հարցերի լուծման մասնակիցը։

6. Դաստիարակել պետի մեջ ոչ միայն յենթարկվելու սովորքներ, այլ և համառորեն կանոնագրքերի կարգով իր այն իրավունքների պաշտպանության հմտությունը, որ նրան տրված են ու սահմանված ԲԳԿԲ կանոնագրքերով։

7. Ավելի ակտիվ ու յեռանդուն կերպով վերացնել թերությունները ռազմական աշխատանքի բոլոր բնագավառներում, վերջ տալ բոլոր տեսակի խեղաթյուրումներին և «իրենից հնարած կանոններին», յերբ կիրառվում են կանոնագրքերն ու վերադաս ինստանցիաների կարգադրությունները։

Յուրաքանչյուր այլ քննադատություն, որ ներհակ է այս դրություններին և բանակի առանձնահատուկ պայմաններին, —մի քննադատություն, որ կարող է

վնաս հասցնել բանակի մարտունակությանը,—առաջվա պես անհանդուրժելի յե բանակի շարքերում։

Բանակի առանձնահատուկ պայմաններն ամենևին որակարգից չեն հանում ինքնաքննադատության լոզունգը, այլ միայն վորոշ սահմանափակումներ են մտցնում։ Այդ սահմանափակումները բըխում են կանոնագրքերով, հրամաններով ու ծրագրերով բանակի կյանքի ճիշտ վորոշումից, պետի ու ստորադրյալի հատուկ հարաբերություններից, որ կառուցված են պետի կարգադրություններն առանց առարկության կատարելու հիման վրա։

Այնուհետև՝ հաշվի առնելով բանակի քաղաքական կոնկրետ պարագան, անհրաժեշտ է նկատի ունենալ հետևյալը.

1. Կարմիր բանակայինների ճնշող մեծամասնությունը կազմում է գյուղացիական մասսան. այդ պատճառով ամեն կերպ

զարգացնելով ու խրախուսելով կարմիր բանակային ակտիվությունը թերությունների հայտնաբերման ու նրանց դեմ մղած պայքարի գործում, հարկավոր է անպայման ապահովել կուսակցմակերպությունների կողմից այդ ակտիվությանը ցույց տված պրոլետարական ղեկավարությունը, ուղղելով այդ ակտիվությունը դեպի առողջ հունի մեջ։

2. Կարմիր բանակային միջավայրը, թեև հատ ու կենդ, բայց և այնպես սողոսկում են մեր քաղաքական հակառակորդները, կուլակային տարրերը։ Նրանք ոգտագործում են յուրաքանչյուր պատեհ առիթ, իրենց նպատակին հասնելու համար, որ ուղղված է կարմիր բանակի քայքայմանը։ Կարմիր բանակն է սողոսկում յերբեմն նաև քայքայված քրեական տարր։ Այն դեպքերում, յերբ անյերկրայելի ակնհայտությամբ պարզված է մեր

դասակարգային հակառակորդի կամ քրեական դեմքը, վոր ձգտում է դեմագոգիկորեն ոգտագործել ինքնաքննադատության մեր լոզունգը, նա պետք է ամբողջ ուժով մերկացվի կուսակցմակերպության կողմից և լիովին վարկաբեկվի ու չեզոքացվի կարմիր բանակային մասսայի հասարակական կարծիքում։ Բայց, անկասկած, մեզ թշնամի ու քայքայված նման տարրերի չընչին քանակով գոյությունը վոչ մի կերպ չի կարող հիմք ծառայել անպատասխանատու և ամենաշնասակար ձևով «խառնակիչ»(бузотер)համարելու այն բանակայինին, վորն անկեղծորեն մատնանշում է մեր թերություններն ու դանցառությունները։

3. Մեծագույն սխալ կլիներ թույլ տալու այնպիսի մի դրություն, յերբ ինքնաքննադատության լոզունգի իրագործումը կհարվածեր պետական հեղինակությանը և այդ հեղինակության նվազեցման պատ-

զարգացնելով ու խրախուսելով կարմիր բանակային ակտիվությունը թերությունների հայտնաբերման ու նրանց դեմ մղած պայքարի գործում, հարկավոր է անպայման ապահովել կուսակցմակերպությունների կողմից այդ ակտիվությանը ցույց տված պրոլետարական ղեկավարությունը, ուղղելով այդ ակտիվությունը դեպի առողջ հունի մեջ։

2. Կարմիր բանակային միջավայրը, թեև հատ ու կենդ, բայց և այնպես սողոսկում են մեր քաղաքական հակառակորդները, կուլակային տարրերը։ Նրանք ոգտագործում են յուրաքանչյուր պատեհ առիթ, իրենց նպատակին հասնելու համար, որ ուղղված է Կարմիր բանակի քայքայմանը։ Կարմիր բանակն է սողոսկում յերբեմն նաև քայքայված քրեական տարր։ Այն դեպքերում, յերբ անյերկրայելի ակնհայտությամբ պարզված է մեր

դասակարգային հակառակորդի կամ քրեական դեմքը, որ ձգտում է դեմագոգիկորեն ոգտագործել ինքնաքննադատության մեր լոզունգը, նա պետք է ամբողջ ուժով մերկացվի կուսակցմակերպության կողմից և լիովին վարկաբեկվի ու չեզոքացվի Կարմիր բանակային մասսայի հասարակական կարծիքում։ Բայց, անկասկած, մեզ թշնամի ու քայքայված նման տարրերի չընչին քանակով գոյությունը վոչ մի կերպ չի կարող հիմք ծառայել անպատասխանատու և ամենավնասակար ձևով «խառնակիչ»(бузотер)համարելու այն բանակայինին, որն անկեղծորեն մատնանշում է մեր թերություններն ու զանցառությունները։

3. Մեծագույն սխալ կլիներ թույլ տալու այնպիսի մի դրություն, յերբ ինքնաքննադատության լոզունգի իրագործումը կհարվածեր պետական հեղինակության և այդ հեղինակության նվազեցման պատ-

ճառ կդառնար։ Ընդհակառակն՝ ինքնաքննադատությունը պետք է ավելի ևս բարձրացնի պետկազմի հեղինակությունը, ամրացնի նրա կապն ու աշխատանքի համաձայնեցումը պետկազմի զանազան կատեգորիաների ու պաշտոնակատար խմբակների միջև։

4. Առանձնապես պետք է հետևել ու նեհնալ ճիշտ փոխհարաբերությունների պահպանումն ու ամրացումը պետկազմի կուսակցական ու անկուսակցական մասի միջև։ Կան բացասական, իսկ յերբեմն ուղղակի հիվանդագին յերևույթներ։ Վոչ մի դեպքում չի կարելի հանդուրժել, վորպեսզի ինքնաքննադատության ծավալումը թեկուզ և ամենափոքր չափով վատթարացնի անկուսակցական պետկազմի աշխատանքի պայմանները, թուլացնի նրա վստահությունը դեպի կուսակցությունը և մասնավորապես դեպի բանակային կուսկազմակերպությունը։ Հայտնաբերել ու շտկել անկուսակցական հրամանատարի գործած սխալներն ու թերությունները կարելի յե և անպայման հարկավոր է, բայց այդ հարկավոր է անել միանգամայն պարզ ցանկությամբ նրան ոգնելու՝ այդ թերությունները վերացնելու գործում։ Հարկավոր է դրա հետ միասին և ավելի ուշադիր ընդունել անկուսակցական պետկազմի ցուցումները թերությունների ու սխալների մասին, նրան ներգրավել այդ թերությունների հայտնաբերելուն և ուղղելուն։

4. Ինքնաքննադատության լոզունգի գործնական կիրառումը կարող է հանդիպել խոչընդոտների թե բանակի պայմաններում այդ լոզունգի կիրառման անկարելիության մասին արած «տեսական» դատողությունների ձևով և թե խոսքով ընդունելու, բայց գործով չհանդուրժելու այդ՝ զոռողության, չինովնիկական ինք-

նահավանության, քսության, բոլորին, բացի իրենից, քննադատելու համաձայնության, դեպի քննադատությունն ու «ստորին խավերի» առաջարկները ցույց տրված բյուրոկրատական արհամարանքի, ձևերով։ Կուսակցական կազմակերպությունները պետք է ամենավճռական, համառ պայքար մղեն կուսակցության այդ լոզունգը բանակում իրագործելուն արգելք հանդիսացող նման բոլոր գիտակից կամ անգիտակից փորձերի դեմ։

Ինչի դեմ առաջին հերթին պետք է ուղղել ինքնաքննադատության առողջարար ազդեցությունը։ Նախ՝ կաղապարչինության, ֆորմալիզմի, կուսակցական կազմակերպության ներսում և հասարակական աշխատանքներում յեղած անճկունության դեմ, բոլոր ձևերի մասսայական, մանավանդ ագիտացիոն-պրոպագանդիստական աշխատանքների, վճռական բարելավման

համար։ Յերկրորդ՝ կարմիր բանակային մասսայից կտրվելու յերևույթների, դեպի նրա կարիքներն ու պահանջները անուշադրության, իսկ յերբեմն ուղղակի արհամարանքի, ԲԳԿԲ կանոնագրքերի գործադրության մեջ բյուրոկրատական խեղաթյուրումների դեմ։ Յերրորդ՝ դեպի իր պարտականությունները ցույց տված ձևական ուրեմն և անբարեխիղճ վերաբերմունքի դեմ, լինի դա կարմիր բանակային, թե պետականային պատկանող անձ։ Չորրորդ՝ բոլոր, թեկուզ և առաջին հերթին «անմեղ», այն ձգտումների դեմ, վորով աշխատում են «կոկել» զորանոցի կյանքի բացասական յերևույթները, «աչքին թոզ փչել» և ծածկել իր աշխատանքում յեղած թերությունները ու սխալները։ Դրա հետ միասին կուսակցական կազմակերպությունն առանձին վճռականությամբ պետք է քննադատի իր սեփա-

կհամախմբի ԿԿԲ ամբողջ կազմը կուսակցության շուրջը և կամրացնի իր ղեկավար կազմակերպչական դերը բանակում։

Վորպես գործնական խնդիրներ, վոր յենթակա յեն լրացման ու զարգացման տեղական փորձի հիման վրա ԿԿԲ Քաղվարչությունն առաջարկում է հետևյալը.

ՔԱՂՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՈՒ ՌԱԶՄԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Քաղմարմինները ու ռազմական կոմիսարները (քաղմասի ոգնականները) առաջին հերթին պետք է ապահովեն ինքնաքննադատության ծավալումն ու նրան տիրելը։ Նրանք պետք է վերաբերվեն մեծագույն ուշադրությամբ դեպի իրենց աշխատանքի նկատմամբ արած բոլոր ցուցումները ու ցանկությունները, որինակ ծառայելով իրենց մոտ հայտնաբերած զանցառությունների ու սխալների շտկման մեջ։

Բանակային պայմաններում ինքնաքննադատության լոզունգն իրագործելու ամբողջ աշխատանքում զորամասի կոմիսարին (քաղմասի ոգնականին) ու միավորության քաղմարմնին պատկանում է ամենապատասխանատու դերը։ Կոմիսարը (քաղմասի ոգնականը) պարտավոր է ապահովել այնպիսի դրություն, վոր յուրաքանչյուր կոմունիստ, յուրաքանչյուր կոմյերիտական, յուրաքանչյուր անկուսակցական կարողանա մերկացնել իր նը-կատած թերությունը, և յեթե նա չի տեսնում նրանց վերացումը, նա կարողանա գալ կոմիսարի մոտ և դնել այդ հարցերը։

2. Հետագայում անհրաժեշտ է ուժեղացնել և վորակապես բարելավել ռազմական կոմիսարի (քաղմասի ոգնականի) կողմից կուսկազմակերպությանը ցույց

տված ղեկավարությունը, ավելի ևս մոտենալով կուսակազմակերպության աշխատանքին։ Ռազմական կոմիսարը (քաղմասի ոգնականը) պարտավոր է իր ղեկավարող աշխատանքում ավելի ևս հենվել կուսակազմակերպությունում ունեցած իր կուսակցական և ընկերական հեղինակության վրա, նրբազգացությամբ պետք է ականջ դնի այս կամ այն հարցի առթիվ կուսակազմակերպության ունեցած կարծիքին, ուշադրությամբ զննի կուսակազմակերպության տրած առաջարկը, այդպիսով իսկ ստուգելով կուսակազմակերպության դրության միջոցով իր ղեկավարող կուսակցական աշխատանքի վորակը։

3. Ռազմական կոմիսարը միջոցներ և ձեռք առնում զորամասի հրամանատարությունից կախված այն թերությունները վերացնելու համար, վոր նշել է կուսակազմակերպությունը (բջիջը, կուսբյուրոն, կոլեկտիվը), քննում է տրած առաջարկները և անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում նրանց իրականացման համար (զորամասի հրամանատարի միջոցով քաղաղարատին տրած կարգադրություններով և այլն)։

4. Կոմիսարը հսկում է կուսակազմակերպության տրած բոլոր ճիշտ ցուցումների ու ցանկությունների իսկական իրացմանը և տեղեկացնում է այդ իրացման արդյունքների մասին (թե անմիջորեն և թե կուսբյուրոյի, քաղղեկի կամ բջիջի քարտուղարի միջոցով)։

5. Բանակում կուսակցական ազդեցության ուժեղացման և ռազմական ապարատի աշխատանքի բարելավման նպատակով քաղմարմիններին հանձնարարվում է հարկ ելած դեպքերում հրավիրել խորհրդակցություններ կուսակցության անդամների զանազան կատեգորիաներից՝ հիմնարկի աշխատողներից, հրամանատարներից, տնտեսարարներից և այլն, քննարկելու

համար ռազմական ապարատի աշխատանքի բարելավման հետ կապված հարցերը։

6. Կուսակցական հանձնաժողովները պետք է լիակատար աջակցություն ցույց տան քաղմարմիններին՝ լուծելու համար Համկկ(բ) Կենտկոմի դիմումով առաջադրված խնդիրները, անհրաժեշտ դեպքերում պատասխանատվության կանչելով կուսակցության այն անդամներին, վորոնք այդ հարցում խլում են կուսակցական գիծը։

ՆԵՐԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

1. Ներկուսակցական կյանքի վերաբերյալ անհրաժեշտ է բանակային կուսկազմակերպությունում նույնպես լիովին կիրառել կուսաշխատանքի վերաբերյալ Համկկ (բ) դիմումով մատնանշած միջոցառումները ու խնդիրները։

2. «Ստորին կուսկազմակերպության աշխատանքում հիմնական տեղը բռնում են

քաղաքական ու ռազմական ուսուցման, կարգապահության և տնտեսության տեղական հարցերը։ Նրբազգացությամբ արձագանքելով ամեն տեսակ թերություններին ու խեղաթյուրումներին, կուսկազմակերպությունը պետք է առաջադրի թե իր սեփական խնդիրները և թե հրամանատարությանն ու քաղաքարատին արած իր ցանկությունները՝ այդ թերությունները վերացնելու վերաբերյալ»։ (ԿԿԲ Դիվիզիայի ռազմկոմների ու քաղբաժնի պետերի ապրիլյան խորհրդակցության բանաձևից)։

3. Տեղական հարցերը պետք է դրվեն ու քննարկվեն վոչ թե ընդհանուր, այլ կոնկրետ, պրակտիկ ձևով։ Նույնպիսի կոնկրետ, գործնական բնույթ պիտի կրեն ընդունվող բոլոր վորոշումները, վորոնց թվում նաև հիշատակվող այն թերությունները, վոր վարչա-

կան կարգադրություն են պահանջում։ Այդ վերջիններիս կուսբյուրոյի միջոցով հանձնվում են զորամասի կոմիսարին։

4. Պետք է ձգտել բարձրացնելու կուսպետակազմի բոլոր անձանց կուսակցական պատասխանատվության զգացմունքը, ուժեղացնելով կուսակցական վերահսկողությունն ու ազդեցությունը։ Կուսակազմակերպությունը պետք է հաճախակի լսի կուսհրամանատարների զեկուցումներ, մանրամասնորեն քննարկի այդ, ոգնելով վերացնելու յեղած թերությունները։ Յեթե կուսակցական պետի ծառայական գործունեության մեջ կան ակնհայտ խեղաթյուրումներ, վոր գցում են կարմիր բանակային մասսայի վստահությունը դեպի նա, վորպես կոմունիստ—հրամանատարի,-կուսկազմակերպությունը պետք է գործադրի կուսակցական ազդեցության միջոցներ»։ (ԿԿԲ զիվռազմկոմիսարների ու քաղբաժնի

պետերի ապրիլյան խորհրդակցության բանաձևից)։

5. Կուսպետակազմի զուտ ծառայական գործունեությանը վերաբերող՝ կուսկազմակերպությունների վորոշումները պետք է իրականացնի ռազմական կոմիսարը կամ անձնական կարգադրությամբ և կամ պետակազմի համապատասխան անձերի կարգադրությունների միջոցով։

Ռազմկոմի կողմից հաստատված այդ վորոշումների կատարմանը պետք է հսկի բջիջի քարտուղարը, ժամանակին իրազեկելով բջիջին արդյունքների մասին։ Իրենց հերթին կուսպետակազմի անձերը պարտավոր են ժամանակին իրազեկ դարձնելու բջիջի քարտուղարին այն պատճառների մասին, վոր ուշացնում են բջիջի վորոշումների կատարումը կամ անհնարին են դարձնում այդ։

6. Կուսակցական պետակազմը պետք է ավելի մեծ չափով, քան մինչև այժմ

և յեղել, ինքը նախաձեռնություն ցույց տա բջիջի առաջ այն ամենահասունացած տեղական հարցերը դնելու գործում, որ պահանջում են բջիջի կողմից ոգնություն կամ հասարակական կարծիքի կազմակերպում։

7. Անհրաժեշտ է լրիվ չափով հայտնաբերել բոլոր տեսակի մասսայական աշխատանքներում, յեղած թերություններն ու խեղաթյուրությունները։ Կարմիր բանակի հասարակական կյանքի այնպիսի կարեվորագույն բնագավառները, ինչպիսին են աշխատանքը հասարակական ինքնագործունեության, մանավանդ տնտեսական աջակցող հանձնաժողովների, կազմակերպություններում, արտադրական ու գրագրական աշխատանքը, հակակրոնական պրոպագանդը, պետք է կուսակցական ամենալայն քննադատության առարկան դառնան նրանց լիովին ազատելու համար յեղած կազիյոնշչինայի ու բյուրոկրատիզմի

տարրերից։ Նրանք պետք է սիստեմատիկաբար ստուգվեն կուսկազմակերպության կողմից, հավաստիանալու համար, թե որքան ճիշտ է տարվում կուսակցական դասակարգային գիծը և որքան են համապատասխանում նրանք կարմիր բանակային մասսայի ու պետկազմի պահանջներին։ Նույնպիսի քննադատություն պետք է քաղաքարապմունքների նկատմամբ, ըստ որում կուսկոլեկտիվներն ու բջիջները պետք է զգալիորեն աջակցեն քաղաքարատին այդ բնագավառում, մանավանդ խնամքով քննարկելով քաղաքարապմունքների հարցերը և նրանց վերաբերյալ մշակելով իրենց գործնական, կուսկազմակերպության կոլեկտիվ փորձի վրա հիմնված՝ առաջարկները։

8. Բջիջն ու կուս բյուրոն իրենց քարտուղարների միջոցով պետք է սիստեմատիկաբար հետևեն իրենց վորոշումների կիրառմանը, հիշեցնելով այդ մասին խսկան-

հրաժեշտ դեպքերում նորից դիմելով կոմի-
սարին։

9. Կուսակցությունն ու բջիջների քարտու-
ղարները պետք է ավելի յուր ուժեղացնեն
առորյա կապը կուսակցության բոլոր ան-
դամների հետ, որպեսզի ոչ միայն ժողով-
ներում, այլ և մշտական շփման միջոցին
ժամանակին հաշվի առնեն բոլոր թերու-
թյուններն ու խեղաթյուրումները։

ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. «Կուսակցության անդամների որի-
նակելի ու ցուցադրական աշխատանքի
լոզունգն ամբողջովին տարածվում է նաև
կոմսոմոլի անդամների վրա։ Կոմյերիտա-
կանի անձնական որինակելիության դաս-
տիարակության հարցը բացառիկ կարևո-
րություն ունի, մանավանդ յերբ հսկայա-
կան քանակով նոր անդամներ են մտնում
կոմյերիտմիության շարքերը։

Խմբակների աշխատանքում առաջնա-
րագ տեղ պետք է բռնի ավելի լրիվ ու
հոգեկան մերկացումներն այն բոլոր թե-
ությունների, վոր կան խմբակի դրու-
յան մեջ, կոմյերիտական պահանջների
ատարման ու զորական կարգապահու-
յան մեջ։

2. Իր քանակով ու ծառայական կազ-
մով ամենից մոտ լինելով կարմիր բանա-
յին մասսայի առորյա կյանքին, այդ-
պիսով ամենից անմիջական հնարավորու-
թյունն ունենալով ժամանակին հաշվի առ-
նելու կարմիր բանակայինների կարիքներն
ու պահանջները, խմբակը պետք է ուժե-
ղացնի կուսբջիջին ցույց տված ոգնու-
թյունը, ժամանակին հայտնաբերելու զո-
րամասի բոլոր թերությունները ու հասու-
նացած հարցերը։ Ուսուցման ու կենցաղի
տեղական հարցերը քննարկելու ժամանակ
խմբակը պետք է խնամքով արձանագրի

կարմիր բանակային մասսայի կողմից ըզ-
գացվող բոլոր թերությունները, զանցա-
ռումները և նրանց մասին իրազեկ դարձը-
նի բջիջին, հատապատասխան միջոցներ
ձեռք առնելու համար։ Խմբակներն ավելի
ակտիվ ոգնություն պետք է ցույց տան
բջիջներին մասսայական աշխատանքի բա-
ցելավման գործում (տես ներկուսակցական
աշխատանքի բաժնում 7-րդ կետը)։

3. Խմբակում տեղական հարցերի դըր-
վածքը, քննարկումն ու այդ հարցերի առ-
թիվ հանած վորոշումները պետք է կրեն
խիստ կոնկրետ, գործնական բնույթ ա-
ռանց ընդհանուր ֆրազների ավելորդ ու
անոգուտ կրկնումների։

Այդ հարցերի (քաղաշխատողների, հրա-
մանատարների զեկուցումների և այլն)
քննարկում ժամանակ, և դրանց առթիվ
հանած վորոշումներում անհրաժեշտ է մատ-
նանշել խմբակի իր գործնական խնդիրնե-
ներն ու նրա առանձին անդամներին տըր-
վող հանձնարարությունները, ինչպես նաև
ցանկություններն աշխատանքի այն բնա-
գավառի վերաբերյալ, վորի մասին լսվել է
ցեկուցումը։ Այդ ցանկությունները պետք
է հաղորդել կուսակցական բջիջին (գնդի
մասշտաբով՝ կուսկոլլեկտիվի բյուրոյին)։

Առաջուց արդեն դրված հարցերի վերա-
բերյալ արած հաջորդ զեկուցումների ու
պատասխանատու կազմակերպիչների հաշ-
վետվությունների ժամանակ հարկավոր է
մատնանշել, թե ինչ չափով են կյանքում
կիրառված խմբակի նախկին վորոշումներն
ու ցանկությունները, և յեթե չեն կիրառ-
ված, ինչ պատճառներով։

4. Գնդի բյուրոներն ու պատասխանա-
տու կազմակերպիչները պետք է ավելի ևս
ուժեղացնեն առորյա կապը բոլոր կոմյե-
րիտականների հետ, վորպեսզի վոչ միայն
ժողովներում, այլ և մշտական շփման ժա-
մանակ հաշվի առնեն բոլոր թերություն-
ներն ու խեղաթյուրումները։

5. Կոմյերիտմիությունում ինքնաքննադատության լոզունգի իրականացման խնդիրը հրամայողաբար պահանջում է ավելի ևս բարելավել խմբակներին ցույց տված կուսղեկավարությունը։ Կուսբջիջները պետք է ապահովեն կոմյերիտական ժողովներում տեղական հարցերի ժամանակին ու լավ վիրակի դրվածքը և հայտնաբերեն այդ հարցերի վերաբերյալ խմբակի կոլեկտիվ կարծիքը։ Նրանք այդպիսով իսկ կբարձրացնեն խմբակում զորամասի դրության համար իրենց պատասխանատվության զգացմունքը։ Վորպես կանոն, յերբ խմբակի ժողովում քննադատվում են ուսուցման ու կենցաղի՝ տեղական հարցերը, պետք է ներկա լինի կուսբջիջի քարտուղարը, ցանկալի յե նաև քաղղեկի ու կուսհրամանատարների ներկայությունը։ Այդ պետք է ապահովի ժողովում ծագած բոլոր հարցերի բացատրությունը, ինչպես նաև կոմյերիտականների կարծիքների լրիվ հաշվառումը։

Բջիջները պետք է նրբազգաց լինեն դեպի կոմյերիտականների առաջադրած հարցերը, ավելի ուշադրությամբ հաշվի առնեն այդ և ավելի արագ արձագանքեն թերություններին և իրազեկեն խմբակին ձեռք առած միջոցների մասին, վորպեսզի կոմյերիտականները տեսնեն իրենց աշխատանքների արդյունքները։

ՊԵՏԵՐԻ ԿԱԶՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Պետք է լայն իրազեկել ամբողջ պետկազմին ինքնաքննադատության լոզունգի իրականացման վերաբերյալ կուսակցության ձեռք առած միջոցառումների, բանակային կուսկազմակերպության աշխատանքի գծի մասին և վորոշակի դնել պետկազմի առաջ նրա սեփական խնդիրներն այդ լոզունգի կիրառման գործում։

2. Կուսակցական կազմակերպությանը, քաղաքարատին և Համկկ (բ) յուրաքանչյուր առանձին անդամին անհրաժեշտ է իրենց առօրյա աշխատանքում ավելի ևս մոտենալ անկուսակցական պետկազմին, ընկերաբար ոգնելով նրան ըմբռնելու կուսակցության գիծը, շտկելու իր սխալները, վոր բղխում են կուսակցության գծի վոր բավարար յուրացումից։

3. Պետք է ձտել, վորպեսզի վերից վար ավելի ուշադիր և ավելի նրբազգաց վերաբերմունք լինի դեպի ստորադրյալները։

Անհրաժեշտ է հաստատել ավելի անմիջական մոտ կապ բարձր ու ավագ պետերի և կրտսեր հրամանատարների միջև, իսկ շտաբներում ու վարչություններում կրտսեր ծառայողների հետ, աշխատողների զանազան կատեգորիաների հետ ունեցած զրույցների ձևով։ Այդ զրույցները պետք է

տարվեն աշխատանքի դրությունը ստուգելու և անմիջական գնահատական ու մեր թերությունների քննադատությունը ստորադաս աշխատողներից ստանալու անկյան տակ։ Այդ հնարավորություն կտա ստորադաս աշխատողին մասնակցելու աշխատանքի վորակի բարելավմանը վոչ միայն իր մասնաճյուղում, այլ և ամբողջ զորամասում։ Այդ կմոտեցնի բարձր ու ավագ պետերին մասսաներին։ Այդ կբարձրացնի բարձր ու ավագ պետերի բարոյական հեղինակությունը։ Այդ կբարձրացնի նաև ստորադաս աշխատողի հեղինակությունն իր իսկ աչքերում, կվերացնի անկման տրամադրությունները և կամրացնի այն գիտակցությունը, թե չնայած իր աշխատանքի չնչին մասշտաբի, ինքը կոչված է մասնակցելու իր ծառայական կատեգորիայից դուրս գտնվող գործերին։

4. Նույնպիսի պահանջ պետք է առա-

ջադրել պետկազմին կարմիր բանակային-
ների վերաբերմամբ։ Հարկավոր է, որ
հրամանատարն ու համապատասխան քաղ-
աշխատողը պարբերաբար իրենց վաշտի
կարմիր բանակայինների հետ ունենան
այնպիսի զրույց, որտեղ յուրաքանչյուր
կարմիր բանակային միանգամայն անկեղ-
ծորեն ու համարձակ հայտնի հրամանատա-
րին ու քաղաքական ղեկանարին իր յու-
րաքանչյուր դժգոհությունը, յուրաքան-
չյուր գանգատը, որոնց թվում և հենց
զրույցի ղեկավարի վրա ունեցած բողոքը։
Հմտությամբ զրույցն անց կացնելը, համ-
բերատար վերաբերմունքը դեպի կարմիր
բանակայինների գանգատը, այդ առթիվ
միջոցներ ձեռք առնելը, կամ բացատրու-
թյունը, թե ինչ պատճառով չի կարելի բա-
վարարել այդ գանգատը, միջոցներից մեկը
կհանդիսանան՝ վերացնելու պետկազմի
կտրվածությունը կարմիր բանակայիններից

և բարձրացնելու պետկազմի հեղինակու-
թյունը։

5. Պետք է ավելի շատ գործադրել ան-
բոնազբոսիկ, վոչ պաշտոնական շփումը
բարձր ու ստորադաս պետկազմի և
պետկազմի ու կարմիր բանակայինների
միջև։ Զրույցը բնակարանում, զորանոցում
(վոչ միայն Լենանկյունում հավաքված),
ակումբում պետք է նույնպես վերացնի
«աստիճանների» (ранг) պարփակմանն ու
կարմիր բանակայիններից կտրվելու յե-
րևույթները։

6. ԲԳԿԲ ամբողջ պետկազմի մասին
բացասական կողմից խոսելու բոլոր փորձե-
րը վերացնելու նպատակով, Կարմիր բա-
նակի պետկազմին հին բանակի պետկազ-
մի հետ համեմատելու առանձին փորձերի
դեմ կռվելու նպատակով, անհրաժեշտ է ա-
վելի լայն ծանոթացնել կարմիր բանակա-
յիններին այն միջոցառումներին, որոնք ձեռ-

նարկում են հրամանատարությունը, քաղաքարատը, պատժիչ մարմինները պետական մարմնի այն անձանց դեմ, վորոնք իրենք գցում են իրենց հեղինակությունն ապորինի վարմունքներով, ամեն տեսակ խեղաթյուրումներով և այլն։ Այդ պետք է ռեալ կերպով ցույց տա, վոր որենքների առաջ պատասխանատվության տեսակետից, զինվորականի պարտականությունների կատարման նկատմամբ, վերադաս պետերի պահանջկոտության տեսակետից դեպի իրենց ստորադրյալները, Բանվորա-գյուղացիական բանակում վոչ մի տարբերություն չկա պետի ու կարմիր բանակայինի միջև։ Այդ կաջակցի բանակի ամբողջ պետական մարմնի հեղինակության և կարմիր բանակային մասսայի կողմից դեպի նա տածած վստահության էլ ավելի ամրացմանը։

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՑԻՆՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Ինքնաքննադատության լոզունգը

պետք է լայն չափով բացատրվի կարմիր բանակային մասսային։ Պետք է միանգամայն վորոշակի դրված լինի այն հարցը, թե մենք կողմակից ենք այնպիսի քննադատության, վորն, ոգտագործելով ու զարգացնելով կարմիր բանակային մասսայի ակտիվությունը, նպաստում է կարմիր բանակի մարտունակության էլ ավելի բարձրացնելուն, վոր այդ առողջ քննադատությունը մենք խրախուսելու ենք, վոր մենք դեմ ենք այնպիսի քննադատության, վորը հակառակ է կանոնագրքերին և կարմիր բանակում ընդունված փոխհարաբերությունների վորոշ կարգերին, վորը գցում է պետական մարմնի հեղինակությունը և թուլացնում նրա կապը կարմիր բանակայինների հետ և այդպիսով իսկ վնաս հասցնում բանակի մարտական կորովին։

Դրա հետ միասին հատուկ նշանակություն է տանում մեր իրականության

ճիշտ լուսաբանման համար մղած պայքարը քաղաքաքաղաքացիներում և ագիտպրոպաշխատանքի բոլոր այլ ձևերն անց կացնելիս։ Բոլոր դեպքերում հարկավոր է վորոշակի դնել մեր կուսակցության գծի, մեր նվաճումների հարցը։ Միաժամանակ պետք է շեշտել մեր թերություններն ու մեր բացերը, մատնանշելով այդ թերությունների վերացման միջոցներն ու այն խնդիրները վոր ունեն իրենք կարմիր բանակայիններն այդ աշխատանքում՝ թե զորամասի ներսում և թե նրա դրսում յեղած թերությունների նկատմամբ։

2. Կարմիր բանակային մասսան պետք է մերկացնի դեպի ծառայությունը և ուսուցումը ցույց տված անփույթ վերաբերմունքի, կանոնագրքերի պահանջների խախտման, անկարգապահության, անկուլտուրականության և այլ բոլոր փաստերը։ Դրա հետ միասին կուսակցական կազմակերպության ու պետկազմի համար չափազանց արժեքավոր են կարմիր բանակայինների կարծիքները ուսուցման մեջ, կենցաղում ու տնտեսություններում յեղած թերությունների մասին։

Ամենալայն ձևով պետք է ծավալվի կարմիր բանակային քննադատությունը մասսայական բոլոր ձևերի աշխատանքի, մանավանդ կարմիր բանակայինների կողմից ընտրվող հասարակական-ինքնագործունեության մարմինների նկատմամբ (տնտեսհանձնաժողովներ, լենանկյունների խորհուրդներ և այլն)։

3. Զորամասում յեղած թերությունների քննադատությունը լայն տարածված է կարմիր բանակային մասսայի մեջ։ Այդ քննադատությունը տարվում է զորանոցում մահճակալի վրա, ճաշարանում, զրոսանքի ժամանակ և այլն։ Մենք պետք է ընդգրկենք անկաղմակերպ այդ կարմիր

բանակային քննադատությունը, դարձնենք դեպի առողջ հունը։ Այս խնդիրը պետք է լուծել ամենակարճ ժամանակամիջոցում։

Այդ իր հերթին սուր անհրաժեշտություն է առաջացնում, վորպեսզի հրամանատարը, քաղաքխատողը, կոմունիստը, կոմյերիտականը, ավելի ևս մոտենան կարմիր բանակայինին ծառայությունից դուրս ժամանակամիջոցին, ավելի խնամքով հաշվի առնեն կարմիր բանակային մասսայի պահանջներն ու տրամադրությունները։

Մենք կարող ենք ու պարտավոր ենք սահմանել գործնական այնպիսի ձևեր ու միջոցներ, վորոնք հնարավորություն տան կարմիր բանակայինին արտահայտելու իր կարծիքներն ու ցանկությունները՝ զորամասի գրությունը բարելավելու վերաբերյալ։ Վորքան ավելի լավ ոգտագործենք մենք այդ, այնքան պետկազմի գործունեությունն ավելի քիչ կքննադատվի «անկյունների» յետևից։

Դրա հետ միասին մենք չենք կարող չգործադրել հասարակական-քաղաքական, վարչական ընույթի միջոցներ այն քննադատների դեմ, վորոնք արհամարում են մեր կողմից ղեկավարվող քննադատությունը, ոգտագործում են անկյունների յետևում տարվող խոսակցություններն ի վնաս կարգապահության, պետկազմի դեմ և այլն։ Կարմիր բանակային քննադատության կազմակերպման գործում հետզհետե ձեռք բերած նվաճումների հետ պայքարի այդ միջոցները պետք է ուժեղացնել։

4. Հիմնական ձևերը, վոր հնարավորություն են տալիս կարմիր բանակայինին արտահայտելու իր կարծիքներն ու ցանկությունները պետք է լինեն ընդհանուր ժողովներն ու զրույցները պետկազմի հետ (տես վերը)։ Ընդհանուր ժողովներում պետք է կանոնավոր դրվեն հրամանատարների, քաղաքխատողների, տնտեսարարների զեկ ու-

ցուցները՝ զորամասի ուսուցման, կարգապահության, տնտեսության ու կենցաղի վերաբերյալ։ Վորպես կանոն, գեկուցումների առթիվ պետք է բացվեն բանավեճեր և ընդունվեն բանաձևեր։ Միևնույն ժամանակ չպետք է ընդունվեն բանաձևերն ընդհանուր դեկլարացիաների ձևով, հնարավորություն տալով մտցնելու կոնկրետ առաջարկներ և ընդունել այդպիսիները, յեթե նրանք նպաստում են զորամասի աշխատանքի ու կենցաղի բարելավմանը։

Միանգամայն անհնար է և պետք ել չէ վաղորոք վերից ճշտորեն վորոշել, թե ինչի մասին կարելի յե և ինչի մասին չի կարելի խոսել ժողովներում։

Ժողովի ճիշտ ընթացքն ամբողջովին կախված է կուսկազմակերպության ղեկավարությունից և պետկազմի կողմից ժողովին նվիրած ուշադրությունից։ Հատուկ

ուշադրություն պետք է նվիրել ժողովի նախապատրաստությանը կուսակցական ու կոմյերիտական կազմակերպությունների և անկուսակցական ակտիվի գծով։

Անհրաժեշտ է անհամեմատ ավելի մեծ ուշադրություն նվիրել ԿԿԲ Քաղվարչության այն դիրեկտիվների կիրառելուն, վոր վերաբերում են անկուսակցական ակտիվի հետ տարվող աշխատանքի հարցին, մասնավորապես՝ ԿԿԲ ԲՎ՝ 1927 թվի ամրան շրջանի ծրագրում յեղած ցուցումներին՝ վաշտի անկուսակցական ակտիվիստների խորհրդակցություններ գումարելու մասին, վորոնք մինչև այժմ բավականաչափ չեն կիրառվում։

5. Ընդհանուր ժողովների վորոշումները պետք է ամենաուշադիր վերաբերմունքը գտնեն կուսկազմակերպությունների, քաղապարատի և ամբողջ պետկազմի կողից։ Գործարար և ոգտակար առաջարկները

պետք է կիրառվեն, ըստ վորում կարմիր բանակայինները պետք է տեղեկություն ստանան այդ մասին։

6. Անհրաժեշտ է ձգտել բարելավելու տեղեկատու աշխատանքի վորակը, վորի դրվածքը ներկայումս միանգամայն անբավարար է։ Տեղեկատու աշխատանքի այնպիսի ձևեր, ինչպիսին են հարց ու պատասխանների յերեկոները, գրքերն ու տետրերը, իրավագիտական կոնսուլտացիան պետք է դրավեն քաղաքարատի ու կուսակազմակերպության լուրջ ուշադրությունը։

7. Պետք է վճռապես ստուգվի ու վերաքննվի վերաբերմունքը դեպի գանգատները։ Կան դեպքեր, յերբ պաշտոնապես, վերադասության կարգով տված գանգատը կամ դիմումը ստացված լինելով վերադաս պետի կողմից, մնում են առանց վորև է լուծման կամ լավագույն դեպքում առանց պատասխանի։ Այդ յերևույթն անհրաժեշտ է վերացնել ամենախիստ միջոցներով։ Ամեն գանգատ կամ դիմում ել չպետք է դրական բավարարում ստանա, բայց վոչ մի գանգատ, պետին տված վոչ մի դիմում չպետք է մնա առանց պարզ պատասխանի անկախ պետի ու գանգատավորի պաշտոնեական դրության։

ԶԻՆԹՂԹԱԿՑԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Զինթղթակցային կազմակերպությունն ու բանակի կարմիր բանակային մասուլի ամբողջ ցանցը (բանակային, դիվիզիական, գնդային ու վաշտային թերթեր) եյական ողակներից մեկն են հանդիսանում բանակում ինքնաքննադատությունը ծավալելու համար և պահանջում են հատկապես հենց հիմա ուժեղացնել կուսակցական ղեկավարությունը։ Ինքնաքննադատության մասին կուսակցության լոզունգը պետք է արձնգանք գտնել զինթղթակիցների աշ-

խատանքում, ավելանում է զինթղթակիցների ուշադրությունը դեպի զորամասերի ուսուցման, տնտեսության և կուսքաղուսաշխատանքի զանազան բնագավառներում յեղած թերությունները։ Անհրաժեշտ է ավելի ևս ուժեղացնել այդ առողջ հոսանքը։ Մասնավորապես հարկավոր է, վոր յուրաքանչյուր զինթղթակից հասկանա, վոր իր գործունեության ասպարեզը պետք է անհամեմատ ավելի լայն լինի այն շրջանակներից, վորոնցով սահմանափակված է թերթումը զետեղելու հնարավորությամբ։ Զինթղթակիցը պարտավոր է գրել թերթին վոչ միայն այն մասին, ինչ անպայման զետեղվելու յե թերթում, այլ և այն ամենի մասին, ինչ նա նկատում է, վոր վատ է, թեկուզ և բանակային պայմաններում այդ հնարավոր չլինի հրապարակելու։ Միևնույն ժամանակ պետք է շրջակել ինքնաքննադատության սխալ մեկնաբանումը, պետք է կռվել այն բանի դեմ յերբ ինքնաքննադատության դրոշի տակ, զինվորականների մի մասը հարձակվում է մյուսի վրա։

2. Պետք է վճռապես կուրս ընդունել բարձրացնելու զինթղթակիցների հեղինակությունը կարմիր բանակայիններ ու պետկազմի միջև։ Անպայման անհրաժեշտ է կարմիր բանակային մամուլի բոլոր տեսակներում ձեռք առնել բոլոր միջոցները, վորպեսզի վոչ մի գործարար թղթակցություն այս կամ այն թերությունների մասին (թե թերթում զետեղվող և թե չզետեղվող) չմնա առանց մանրազննին հետաքննության, առանց անհրաժեշտ միջոցներ ձեռք առնելու և հետագայում այդ մասին տվյալ թերթում չհաղորդելու։ Միևնույն ժամանակ զինթղթակիցն ու ընթերցող մասսան պետք է ստանան վոչ թե ընդհանուր պատասխան, թե նյութն ուղարկված

և այսինչ տեղը, այլ՝ թղթակցության ռեյալ արդյունքների մասին բավականաչափ լրիվ ինֆորմացիա։

Պետք է հասնել այնպիսի դրության, վորպեսզի վոչ միայն վաշտի, այլև գնդի կուսքաղաղարատը և ամբողջ պետկազմը հաշվի առնեն իրենց աշխատանքներում այն ցանկություններն ու թերությունները, վոր նշվում են վաշտերի ու գնդի պատի թերթերում, դիվիզիական ու բանակային լրագրերում։

Զինթղթակիցներին հալածելու յուրաքանչյուր փորձ, ինչ ձևով էլ այդ արտահայտվելիս լինի, պետք է անմիջապես հատվի։

Ի վերջո ԿԿԲ Քաղվարչությունը մի անգամ ևս շեշտում է կուսակազմակերպություններին ու կուսակցության անդամներին ամենուրեք այնպիսի դրություն ապահովելու անհրաժեշտությունը, վորպեսզի ինքնաքննադատության լոզունգի իրականացումից մեր ստացած ամենառատ փորձն ու նյութերն իրոք իրականացվեն գործնական աշխատանքում։ Թերությունների մասին բոլոր ցուցումները, բոլոր ցանկություններն ու առաջարկներն արժեք կունենան վոչ թե ինքնին, այլ միայն այն չափով, ինչ չափով նրանք կարտացոլվեն կյանքում։ Հակառակ դեպքում մենք միայն կանցկացնենք կարճատև ագիտացիոն կամպանիա, վորից կստանանք միայն բացասական արդյունքներ։ Հարկավոր է համառ, սիստեմատիկ, յերկարատև աշխատանք, վերացնելու համար մեր ինքնաքննադատությամբ մերկացված յուրաքանչյուր թերություն։

Հավելված՝ Համ ԿԿ(բ) Կենտկոմի հունիսի 3-ին կուսակցության բոլոր անդամներին ու բոլոր բանվորներին ուղղած դիմումը։

Կոմունիստական վողջույնով՝

Կովկասյան Կարմրադրոշ Բանակի Քաղաքական Վարչության Պետ՝ ՎԱՍԻԼՅԵՎ.

23 հունիսի 1928 թ.
Ք. Թիֆլիս։
№ 1371.

ՀԱՄԿՈՄԿԱՒՍԻ ԿԵՆՏԿԱՄԻ ԴԻՄՈՒՄԸ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՅԵՎ ԲՈԼՈՐ ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ

Ընկերներ,

Բանվոր դասակարգը գյուղացիության վիթխարագույն մասսաների հետ միասին ամենադժվարին պայմանների շրջապատում դիմել է արդեն իր շինարարության ծավալման և զարգացման, վորի չափերը և թափը շատ ավելի մեծ են, քան մինչպատերազմյան շրջանի շինարարությանը։

Կառուցանելով նոր գործարաններ, ելեկտրակայաններ, հիմք դնելով նոր հանքահորերի և շախտերի և գործադրելով նոր տեխնիկայի միջոցները, բանվոր դասակարգն ինդուստրացման ե յենթարկում բոլոր մեր յերկիրը։ Նա վերակառուցանում ե սրդյունաբերությունը։ Սակայն նա նպատակ ե դնում նաև վճռականապես վերակառուցանել նաև մեր գյուղատնտեսությունը.—նա կամենում ե ոգնել և աջակցել գյուղացիական միլիոնավոր ծխերին՝ կոոպերացման յենթարկելու առ ու ծախքը, փոխարինելու ժանգաղն ու արորը տրակտորով և հնձող մեքենաներով, ինչպես նաև՝ ծխի վողորմելի տնտեսությունը՝ որինակելի կոլեկտիվ տնտեսությամբ։

Բանվոր դասակարգն ու նրա կուսակցությունը լարում են իրենց բոլոր ուժերն այն նպատակի համար, վոր կարողանան մեր աղքատ և անգրագետ յերկրից ստեղծել հարուստ և կուլտուրական սոցիալիստական մի յերկիր, վորն ոժտված լինի առաջնակարգ տեխնիկայով, հանրական կազմակերպված տնտեսությամբ, լուսավորությամբ և զգոն ու աշխատունակ մի

ժողովրդով, որին ծանոթ չեն չքավորները և անապատանները, սակայն ծանոթ չեն նաև ճնշող, շահագործող կապիտալիստներն ու կալվածատերերը։

Յերկրի վերակառուցման համար կատարվող այս տենդագին աշխատանքների ընթացքում բանվոր դասակարգն այսոր դեմ է առնում միջազգային կապիտալիզմի աճող ճնշման և կուլակային տարրերի ընդդիմադրության, որպիսին ծավալվել է մեր յերկրի արտադրողական ուժերի ընդհանուր վերելքի ֆոնի վրա, չնայած և ավելի արագ թափով աճող տնտեսության սոցիալիստական սեկտորին և վերջապես, դեմ է առնում նաև մասնագետների որոշ խավերի կողմից գործադրվող լռիկ սաբոտաժին։

Սակայն, բանվոր դասակարգն ընդհարվում է այսոր ոչ միայն այդ թշնամիներին։ Իր վերընթաց զարգացման ճանապարհի վրա նա դեմ է առնում իր իսկ սեփական պետական ապարատի չարաղուն բյուրոկրատիզմին, նրա ծանրաշարժության, նրա քարացածության, վրդովեցուցիչ քաշքշուկին, որոնք ոչ այլ ինչ են, բայց յեթե հին չինովնիկական ժառանգության մի մնացորդ և մասսաների անկուլտուրականության, հետամնացության մի արդյունք։ Ընդհարվում է նա նմանապես և այդ մասսաների կողմից ի հայտ բերվող կառավարելու «անբավարար կարողության» և այդ մասսաներին ոչ գոհացուցիչ թափով իրապես յերկիր կառավարելու գործի մեջ ներգրավելու աշխատանքին։

Այդ ճանապարհի վրա նա դեմ է առնում նաև իր ապարատի քայքայված ողկնեերին, նրա ժանգակալած և փտած մասերին։ Իր ամենահարազատ կազմակերպությունների—արհեստակցական միությունների

մեջ անգամ նա յերբեմն դեմ է առնում փտածության, չինովնիկական վերասերման, սանձարձակության, հարբեցողության, չարամիտ անուշադրության, դեպի մասսաների պահանջները, սնապարծության, քծնության «վերին խավերի հանդեպ, ագիտության, քարացածության, կոնսերվատիզմի և հնամոլության։

Ունենալով մի ապարատ, վորպիսին չնայած իր անվիճելի ծառայություններին, ունի այսորինակ բացեր և տառապում է այսպիսի հիվանդություններից, հարկավ անհնարին է բավականաչափ արագությամբ նպաստավոր պայքար մղել ներքին թշնամու ընդդիմադրության դեմ, վնասարարության լոամունջ խրամատների դեմ, մեր իսկ դասակարգի թերությունների և աշխատանքի այն թափթփված տեմպի դեմ, վոր տեղի ունի մեր տնտեսական և կուլ-

տուրական շինարարության բազմաթիվ ճակատներում։

Կենտրոնական Կոմիտեն հայտարարում է, վոր վերակառուցողական շրջանի այս բոլոր խնդիրները չեն կարող լուծվել առանց այն բանի, վոր մեր մասսաներն ամենահամարձակ և ամենավճռական կերպով ներգրավվեն դեպի սոցիալիստական շինարարության գործը, դեպի ստուգումն ու վերահսկողությունն այդ միլիոնավոր մասսաների կողմից մեր ամբողջ ապարատի նկատմամբ և այդպիսին զտելու և մաքրելու համար նրա մեջ մտած անպետք տարրերից։

Կուսակցությունը համարձակորեն և ամենայն վճռականությամբ մերկացնում էր և այսոր էլ մերկացնում է ամբողջ յերկրի առջև մեր տնտեսական և պետական որգանիզմի բոլոր հիվանդություններն ու խոցերը։

Կուսակցությունը կոչ է արել բոլոր

աշխատավորներին դիմելու ամենադաժան ինքնաքննադատության, վորպեսզի այդ ինքնաքննադատությունը կարելի լինի մեր ամբողջ ապարատի առողջացման իսկական լծակը դարձնել և վորպեսզի այդ իրական և իսկական և վոչ թե լոկ թղթի վրա հիշատակված մի պայքար լինի բյուրոկրատիզմի դեմ և մասսայական արշավի դեն հանդիսանա ընդդեմ մեր բոլոր թշնամիների՝ սկսած կուլակից և վնասարարից մինչև քայքայման տարրերը մեր իսկ սփական շարքերում։

Ինքնաքննադատության լոզունգն՝ «առանց անձնավորությունների խարության», մի քննադատության, վոր գալիս է վերևից մինչև ներքև և ներքևից մինչև վերև, —մեր որվա կենտրոնական լոզունգներից մեկն է հանդիսանում։

Կուսակցությունն արդեն բավական շատ բան է արել կազմակերպելու համար այդ

ինքնաքննադատությունն ու ինքնատուգումը, կիրառելով այդ նպատակով համապատասխան մի կամպանիա մեր մամուլի մեջ և վերևից արդեն աջակցելով այդ գործին։

Յեվ սակայն, կարևորագույն խնդիրն է այս ասպարիզում—ներքևից ևս բարձրացնել տալ ստեղծարար ինքնաքննադատության դիմադարձ հուժկու մի ալիք, վորպիսին իրապես կարող կլինի թարմացնել և բարեկարգել կուսակցական, արհմիութենական, խորհրդային և այլ կազմակերպությունների ամբողջությունը։

Այդ իսկ պատճառով սոսկ հետևողականորեն կիրառվող ներկուսակցական և արհմիութենական դեմոկրատիան, սոսկ կուսակցական և արհմիութենական մարմինների լիակատար ընտրականությունը և սոսկ հնարավորություն ունենալը՝ փոխարինելու ամեն մի բյուրոյի և կոմիտեյի ամեն

մի քարտուղարին,—հնարավորություն կարող է ստեղծել իրականացնելու համար մասսաների իսկական վերահսկողությունը, վերացնելու մեր ապարատի վրա գոյացած բոլոր բյուրոկրատական խլերը և կասեցնելու բյուրոկրատական սեղմումի, ընկերական համապարտ յերաշխավորության, չինովնիկական քծնության, սանձարձակության, մասսաների շահերը մոռացության տալու և քաղքենական հանգստության բոլոր սպասելի հնարավորությունները։

Արտաքո այս ձեռնարկումների քննադատության և ինքնաքննադատության լոզունգը սոսկական պաշտոնական գրագրության, վորպիսին կարող է միայն վարկաբեկել այդ լոզունգը, կուսակցության ղեկավարությունը և հենց իրեն իսկ կուսակցությանը մեր մասսաների աչքում։

Արտաքո այս ճանապարհի՝ չկա վոչ մի յերաշխիք, թե մեզանում ապագայում չեն կրկնվելու այլ ևս այնպիսի դեպքեր, ինչպիսին եյին Շախտիի, Սմոլենսկի և Արտեմովսկի գործերը։ Արտաքո այս ճանապարհի հնարավոր չե զտել և մաքրել կուսակցական, խորհրդային և կոոպերատիվ ապարատն այն բոլոր տարրերից, վորոնք ձուլվում են յերկրի կուլակ կապիտալիստական տարրերին։

Այսպիսով, կուսակցական աշխատանքի ոսպարիզում անհրաժեշտ է կիրառել հետևյալ ձեռնարկումները և լուծել հետևյալ խնդիրները.—

1. Ապահովել ներկուսակցական քննադատության ազատությունը, վորպիսի հանգամանքը ժխտում է այնպիսի մեթոդների կիրառումը, յերբ ինքնուրույն միտքը և քննադատական ամեն տեսակ դիտողությունները նախապես արդեն դեն են շրջվում, վորպես թեքում, աղմկարարություն և այլն։

2. Ապահովել կուսակցական մարմիններ-
ի լիակատար ընտրականությունը։

3. Վճռականապես վերացնել կոմու-
նիստների պատասխանատվության մեղ-
մացման պրակտիկան այլ և այլ վարչա-
կան և դատական գործերով, կենսագործե-
լով և կիրառման դնելով Լենինի հին ված
սկզբունքը, վորով կուսակցության ան-
դամներն ավելի խիստ պատասխանատվու-
թյան և պատժի պիտի յենթարկվեն, կու-
սակցական հանցանք համարելով կուսակ-
ցության վորևե անդամի գործած մեղքն
ու հանցանքը ծածկելու դեպքը, վորպիսի
բարձր դիրք ել վոր նա գրավելիս լինի
կուսակցական մարմինների սիստեմի մեջ։

4. Ուժեղացնել կուսակցության աշխա-
տանքը մասսաների շրջանում, առանձնա-
հատուկ և բացառիկ ուշադրություն դարձ-
նելով բանվորական նոր շերտերի, բան-
վոր յերիտասարդության և գյուղի պրոլե-

տարական և կիսապրոլետարական խավե-
րի վրա։ Ընդ սմին կուսակցական բջիջնե-
րը պետք է գործեն և աշխատեն վոչ մի-
այն ֆաբրիկայում և գործարանում, այլ և
բանվորական հանրակացարանում, բանվո-
րական բնակարաններում, ճաշարաններում
և ակումբներում։

5. Վորակապես բարձրացնել աշխատան-
քը՝ ըստ ամենայնի մաքառելով պրոլետա-
րական հասարակությանը վարչական հրա-
մաններ տալով և մանրաբան խնամակա-
լությամբ փոխարինելու դեմ, կուսակցա-
կան կազմակերպությունների կողմից։ Կու-
սակցական և արհմիութենական կազմա-
կերպություններից վճռականապես դուրս
քշել բանակռիվների վոչ ընկերական մե-
թոդները, մանավանդ շարքային բանվոր-
ների նկատմամբ։

6. Սիստեմատիկ կերպով բարեկարգելով
և բարելավելով կուսակցության ղեկավա-

բող մարմինների սոցիալական կազմը, պահանջել ինչպես կուսակցական ակտիվի կողմից առավելագույն կապերն ստեղծելու մասսաների հետ, այնպես ել այն, վոր շրջունակաբար վորակապես բարձրանա այդ ակտիվի կազմը մի շարք ասպարեզներում և առաջին հերթին՝ տնտեսական աշխատանքի ասպարիզում (տեխնիկա, արդյունաբերություն, գյուղատնտեսություն և այլն)։

7. Ամեն կերպ աշխատել, վոր ինչպես կոմունիստների, այնպես ել մասսաների վրա ներգործություն անելու մեթոդներն առաջին հերթին հանգեն կուսակցության իսկ անդամների որինակելի և ցուցադրական աշխատանքին, ընդ սին կուսակցության անդամները՝ անկուսակցական բանվորների աջակցությամբ՝ վճռական պայքար պիտի ծավալեն կոմունիստների «կենցաղային փտման» դեմ։

Արհմիութենական շարժման ասպարիզում անհրաժեշտ է.—

1. Ամենաղաժան պայքարը մղել արհմիութենական դեմոկրատիայի խախտումների դեմ և ի նպաստ արհմիութենական ղեկավարող մարմինների ընտրականության առաջին հերթին։ Վճռականապես հետ մղել ղեկավարությունից բյուրոկրատական այն բոլոր տարրերին, վորոնք կորցրել են մասսաների հետ կապ պահպանելու զգացողությունը և աշխատել թարմացնելու այդ կազմակերպությունները համապատասխան վերընտրության միջոցով։

2. Անհրաժեշտ է արհմիությունների կողմից գործադրել այնպիսի մի քաղաքականություն՝ ապահովված նրանց կոմֆրակցիայի համապատասխան քաղաքականությամբ, վորի պայմաններում արհմիությունները վոչ մի դեպքում և վոչ մի բո-

պե անգամ աչքաթող չանեն և չմոռանան իրենց առանձնահատուկ սպեցիֆիկ խնդիրները, խնդիրներ, որոնք տարբերվում են տնտեսական մարմինների անմիջական խնդիրներից։ Այդ խնդիրների թվին են վերաբերում՝ բանվորների ոչ միայն ընդհանուր, այլ և անմիջական կարիքների պաշտպանությունը, ապարատի բյուրոկրատական այլանդակումների դեմ մղվող պայքարը, կուլտուր-դաստիարակչական խոշոր աշխատանքը և մասսաներին դեպի մեր սոցիալիստական շինարարությունը ներգրավելը։

Առանց այս աշխատանքները կատարելու մեր արհեստակցական միությունները անկարող են լինելու կատարել իրենց—«կոմունիզմի դպրոցի» դերը։

3. Ուժեղացնել և աշխուժացնել աշխատանքն արհմիութենական բոլոր կազմակերպություններում և առաջին հերթին նրանց ստորին ցանցում—գործարկոմներում, արտադրական խորհրդակցություններում և ժամանակավոր վերահսկիչ հանձնաժողովներում։

4. Տարածել այդ ժամանակավոր վերահսկիչ հանձնաժողովներն արտադրության և փոխադրության բոլոր ճյուղերի վրա։

5. Աշխուժացնել արտադրական խորհրդակցությունների աշխատանքները։ Ապահովություն ստեղծել, որ գործնականում առավել արագ թափով կարելի լինի կենսագործել բանվորների պրակտիկ առաջարկները։ Պատասխանատվության և տիպարային պատժի յենթարկել այդ գործը սաբոտաժի յենթարկողներին։ Վերածել արտադրական խորհրդակցությունները մասսայական վերահսկողության մարմինների, ներգրավելով մասսաներին գիտակցական և ակտիվ սոցիալիստական շինարարության մեջ, որպիսին կարող է դաստիարակչա-

կան հզոր միջոց հանդիսանալ և կարևորագույն մի լծակ՝ հասարակական բոլոր հարաբերությունները իրական վերակառուցման յենթարկելու համար ինչպես ֆաբրիկայում, գործարանում, հանքահորերում, յերկաթուղային արհեստանոցում, այնպես էլ խանութում։

Անհրաժեշտ է ըստ ամենայնի աջակցել արտադրական խորհրդակցություններին ԲԳ Տեսչության մարմինների կողմից և ԲԳ Տեսչության Ժողկոմատի մարմիններին՝ արտադրական խորհրդակցությունների կողմից, վորպես մասսայական վերահսկողության որգաններ։

6. Անհրաժեշտ է արհեստակցական միությունների շարքերը ներգրավել բանվորների բոլոր հետաքրքիր խավերին, բացառիկ ուշադրություն նվիրելով այդ մասսաների (գյուղատնտեսական բանվորների, վոչ վորակյալ բանվորների, կանանց և յերիտասարդության) նյութական կուլտուրական և քաղաքական մակարդակի բարձրացման գործին։

7. Առաջ քաշել նորանոր կադրերը դեպի արհեստակցական աշխատանքը, լայն կերպով մասնակից դարձնելով այդ աշխատանքին անկուսակցական բանվորներին, ապահովելով նրանց ակտիվ մասնակցությունն ու դերը վերոհիշյալ աշխատանքի պրոցեսում։

8. Ուժեղացնել դաստիարակչական աշխատանքը պրոլետարական կադրերի մեջ, բարձրացնել նրանց արտադրական տեխնիկական կուլտուրականությունը, կառավարելու և ղեկավարելու կարողությունը և դասակարգի առջև ունևնալիք պատասխանատվության զգացումը։

Խորհրդային ապարատի ասպարիզում անհրաժեշտ է խոշորագույն յեռանդով հա-

բուցանել և լուծել հետևյալ հերթական խնդիրները.—

1. Պայքարը բյուրոկրատիզմի դեմ և մեր ապարատի հետագա համարձակ պարզեցումը։

2. Բանվորներին առաջ քաշելը դեպի պետական և պետական-տնտեսական աշխատանքը, պայմանով, որ այդ առաջքաշումը կերբուվի անշեղորեն, սիստեմատիկ և որբստորե աննկուն կերպով կատարվող աշխատանքի կարգով։

3. Ստեղծել իրապես ուսում առած դիտցող և վորակյալ աշխատողների կադրեր, ստեղծել նորանոր մասնագետներ, վորոնք ըստ ամենայնի նվիրված լինեն խորհրդային իշխանության։ Ստեղծել նոր կարմիր մասնագետների բանվոր դասակարգին պատկանող մարդկանց թվից։ Ստեղծել նոր ինտելիգենցիա բանվոր դասակարգի շարքերից յեղած մարդկանցից և վերզրավել արդ ն, իսկ գոյություն ունեցող վորակյալ և պրոլետարակադրային ինտելիգենտներին խորհրդային, տնտեսական և կոոպերատիվ ապարատի մեջ։

4. Բարեկարգել մեր պետական ապարատի կազմությունը, դարձնելով այդպիսին առավել համապատասխան մեր սոցիալիստական եկոնոմիկայի աճած և զարգացած պայմաններին և պահանջներին։

Սոցիալիստական շինարարության չափերն ու ծավալը և աշխատանքի վիթխարագույն բարդությունը բանվոր դասակարգից և նրա կուսակցությունից պահանջում են լարել իրանց բոլոր ուժերը, դիմել անընդհատ ինքնագաստիարակման և ինքնազարգացման։

Վտարելով իր շարքերից այն ամենը, ինչ վոր փտած է, իրապես այլասերվող է, սիստեմատիկորեն մաքառելով թշնամու դեմ այլ և սիստեմատիկորեն բարձրացնելով մեր

պահանջկոտությունը մեր իսկ հանդեպ,— բանվորներն ի վիճակի կլինեն հաղթահարելու նաև բոլոր և ամեն տեսակ դժվարությունները և ձեռք կբերեն վճռական հաղթանակը։

Կենտրոնական Կոմիտեն այն հաստատ համոզմունքն ունի, որ այս խնդիրների լուծման պահին, մեր մեծ կուսակցության բոլոր հավատարիմ զինվորները կանգնած կլինեն պրոլետարական բանակի առաջին շարքերում և իրենց անձնական օրինակով իրանց անողոք, սակայն ստեղծարար և գործնական ինքնաքննադատությամբ և անձնվեր աշխատանքով ի վիճակի կլինեն առաջնորդելու և իրանց հետևից տանելու պրոլետարական միլիոնավոր մասսաներին։

Համակ (բ) Կենտրոնական Կոմիտե

ՀԱՅԿԱՅԻՆ ՍՍՀ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ
անվան
Գրադարան

ՀՀ Ազգային գրադարան
NL0206873

41.260